

ՀԱՅՏՏԱՏՈՒՄ ԵՄ
ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան
գրականության ինստիտուտի տնօրեն՝
բանասիրական գիտությունների թեկնածու
Հ. Որսկանյան

ԱՆԻ ԳԱՐԵԳԻՆԻ ՆԵՐՍԵՍՅԱՆԻ՝

Ժ.01.07. /Արտասահմանյան գրականություն/ մասնագիտությամբ բանասիրական
գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի համար ներկայացված
«ՆԻԼ ՍԱՅՄՈՆԻ ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՆՐԱՅԻՆ ԵՎ ԹԵՄԱՏԻԿ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ»

թեմայով թեկնածուական ատենախոսության վերաբերյալ առաջատար կազմակերպության

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի Արտասահմանյան
գրականության, գրական կապերի և գրականության տեսության բաժնի 18.06.2025թ. նիստին
մասնակցում էին բ.գ.թ., դոցենտ Ք.Բեջանյանը, բ.գ.դ., դոցենտ Հ.Մուսայելյանը, բ.գ.թ.
Լ.Գասպարյանը, բ.գ.թ., դոցենտ Զ.Հայրյանը, բ.գ.թ. Ա.Սողոյանը, բ.գ.թ., դոցենտ
Վ.Նավասարդյանը և Ք.Հովհաննիսյանը, իսկ բ.գ.դ., պրոֆ. Հ.Էդոյանը, բ.գ.թ. Գ.Կարազյոզյանը
և բ.գ.թ., դոցենտ Վ.Արսենյանը կարծիքները տրամադրել են գրավոր:

Նիստը վարում էր՝

Արտասահմանյան գրականության, գրական կապերի և գրականության տեսության բաժնի
վարիչ, բ.գ.թ., դոցենտ Քրիստինե Բեջանյանը:

Նիստի քարտուղար՝ Քրիստինե Հովհաննիսյան:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

Անի Գարեգինի Ներսեսյանի՝ «Նիլ Սայմոնի կատակերգությունների ժանրային և թեմատիկ
առանձնահատկությունները» ատենախոսության քննարկումն ու հրապարակային
պաշտպանության երաշխավորելու հարցը:

Արտահայտվեցին՝ բ.գ.թ., դոցենտ Ք. Բեջանյանը, բ.գ.թ. Ա. Սողոյանը, բ.գ.թ., դոցենտ Վ.
Նավասարդյանը, բ.գ.թ., դոցենտ Զ. Հայրյանը, բ.գ.դ., դոցենտ Հ. Մուսայելյանը, բ.գ.թ. Լ.
Գասպարյանը և Ք. Հովհաննիսյանը:

Ելույթ ունեցողները նշեցին, որ ատենախոսության առանցքում XX դարի ամերիկացի
ականավոր թատերագիր Մարվին Նիլ Սայմոնի դրամատուրգիայի, դրա
առանձնահատկությունների և դրամատիկական «նոր լեզվի» քննությունն է, որի
վերջնարդյունքը թե՛ բովանդակային, թե՛ կառուցվածքային տեսակետից կուր է և
համակարգված: Աշխատանքը հիմնականում կառուցված է տեղեկատվական-վերլուծական
ընդհանուր սկզբունքի վրա, և այս առումով կատարված է մեծ աշխատանք:
Ուսումնասիրության նպատակը, խնդիրները նշված են, գիտականորեն հիմնավորված

սեղմագրում, վերլուծությունները՝ փաստարկված գրապատմական տեղեկատվությամբ և ամրագրված տեսական բավարար ընդհանրացումներով: Ինչպես նշել էր Գ. Կարազյոզյանը՝ «Անի Ներսեսյանի աշխատանքը ներկայացնում է կարևոր գիտական հետաքրքրություն՝ հաշվի առնելով այն թեմատիկայի արդիականությունը, ընտրած մեթոդաբանության հիմնավորվածությունը և ստացված արդյունքների ներդաշնակությունը ժամանակակից գիտական դիսկուրսի շրջանակում: Ատենախոսությունում մանրակրկիտ վերլուծված են ուսումնասիրության առարկան, ներկայացված են նոր տեսանկյուններ ու մեկնաբանություններ, որոնք կարող են օգտակար լինել ինչպես ոլորտի մասնագետների, այնպես էլ հետազա հետազոտությունների համար: Թեզը հրատարակելու դեպքում ցանկալի է ուշադրություն դարձնել տեխնիկական կողմին, մասնավորապես՝ մատենագիտական ցանկին»: Բայց դրան կանդիդատանք ստորև:

Խորքային և տեսական վերլուծության են ենթարկված «Տարօրի *անկ* գույզ» (էջ 4-ում և ինչո՞ւ է անգլերեն վերնագիրը հայտվում միայն 39 էջում, ապա կրկին 57 էջում, հարկ է նշել մեկ անգամ, առաջինը), «Զբոսայգում՝ ոտաբոբիկ», «Արևի տղաները», «Համար՝ կալիֆոռնիական հյուրանոցում», «Ես պիտի նկարահանվեմ» և «Յոնքերսում մոլորվածները» դրամաները: Բացատրելով իր ուսումնասիրության առարկայի և օբյեկտի ընտրությունը՝ Ներսեսյանը պնդում է, որ «*Այս պիեսներում առավելապես տեսանելի են ամերիկյան հասարակությանը ձուլվելու միտում ունեցող երիտասարդների կերպարները, որոնք միանշանակ տարված են ամերիկյան երազանքով, որին ձգտում են հասնել ցանկացած գնով*» (էջ 4): Առանձնահատուկ ուշադրության են արժանանում դրամատուրգի այն յուրօրինակ պիեսները, որտեղ «*գիտակցորեն թե անգիտակցորեն, արտացոլված են իր ներաշխարհում կուտակված հարցադրումներն ու մտորումները, կապված միջմարդկային հարաբերությունների խնդիրների, Ամերիկայում ապրող տարբեր ազգությունների մարդկանց հուզող հարցերի հետ, որոնք էլ անմիջականորեն ազդեցություն են թողել ոչ միայն ամերիկյան երգիծական գրականության վրա, այլև ձևավորել ու կազմավորել են ամերիկյան ժամանակակից թատրոնը*» (էջ 5), ինչն անկասկած ատենախոսության հաջողված հատվածներից է:

Վերլուծելով Նիլ Սայմոնի ստեղծագործությունները՝ ատենախոսը ընդգծում է, որ հեղինակը՝ «*միշտ գիտակցել և անխախտ է պահել պիեսների կերպարների և հանդիսատեսի կապը՝ որպես հզոր գործիք օգտագործելով իրեն հատուկ հումորը: Գրողը ներկայացրել և ուսումնասիրել է այնպիսի թեմաներ, ինչպիսիք են միայնությունը, փոխհարաբերությունները և միջանձնային հարաբերություններն ու առհասարակ մարդկային բարդ հոգեվիճակները*» (էջ 6): Ներսեսյան Անին քննում է հեղինակի *կենցաղային* պիեսները, որոնց մեջ կան նաև *աբսուրդի* ժանրին բնորոշ տարրեր: Անդրադառնում է նաև *քաղաքային կատակերգության* ժանրին (էջ 6, 40-41, 53-56, 60-63, 67, 86)՝ եզրակացնելով. «*Նիլ Սայմոնի գրական տիրույթը բավական ընդգրկուն է, քանի որ այնտեղ կարելի է գտնել ամեն բան՝ ֆանտաստիկ տիեզերական երևույթներից մինչև մարդկային նուրբ հոգու որոնումները: Եվ այս բոլոր ջանքները միտված են հասկանալու և, ինչու չէ, նաև ընկալելու ժամանակակից մարդու ներաշխարհն ու ապրելակերպը: Սակայն, ըստ Նիլ Սայմոնի, մարդիկ նույն մարդիկ են, ինչպես դարեր առաջ: Նրանք դարձել են առավել մեխանիզացված, առավել անիրական ու եսակենտրոն: Նրա թատերգություններում կարելի է տեսնել, թե ինչպես է անհատը փորձում պահպանել արժանապատվությունն ու ազատ կամքն այս աշխարհում, որը կարծես թե առաջնորդվում է մահվան և ավերման սկզբունքով*» (էջ 64): Անհասկանալի է, թե ի՞նչ ի նկատի ունի ատենախոսը երկրորդական նախադասությամբ՝ կամքն է *առաջնորդվում սկզբունքով*, թե աշխարհի:

Աշխատանքը բաղկացած է *ներածությունից, երեք հիմնական գլուխներից, եզրակացությունից և գրականության ցանկից:*

Ներածության մեջ ներկայացված են արդիականությունն ու գիտական նորույթը, նպատակը, խնդիրները (միայն սեղմագրում, էջ 5), առարկան և օբյեկտը (վերջինը նշված է միայն սեղմագրում, էջ 3), ինչպես նաև օգտագործված աղբյուրների ցանկը: Որոշ անճշտություններ կան մեթոդներն ու մեթոդաբանական հիմքը ներկայացնող հատվածում (ատեն., էջ 7 և սեղմ., էջ 5), որտեղ հարցի ուսումնասիրվածության աստիճանը պատշաճ լուսաբանված չէ: Ինչո՞ւ է նշված միայն գործնական նշանակությունը (այն էլ միայն սեղմագրում, ի դեպ հայերեն մասում, էջ 6, որուսերեն հատվածում՝ հակառակը, միայն теоретическая значимость работы, էջ 19, իսկ անգլերեն՝ ոչինչ, էջ 21):

Ատենախոսության տեքստը շարադրված է 131 էջի վրա՝ ներառյալ օգտագործված գրականության ցանկը, որը պարունակում է ընդամենը 65 աղբյուր՝ հայերեն, որուսերեն և անգլերեն լեզուներով, սակայն ոչ գիտական աշխատանքին վայել ձևով՝ բացակայում են ընդհանուր էջերը, գրեթե բոլոր աղբյուրներում՝ տպագրատան տվյալները, անուն/ազգանունները պետք է միաձև լինեն, այլ ոչ թե

№ 2 – Хайдеггер, М.

№3 – Д. Николаев.

№ 5 և 6 – Neil Simon,

№ 7 և 8 – Neil Simon

№ 9 – Bowlby, J.

№ 19 – E. Breisach, իսկ № 20 – Fanon F.

№ 12 – *Ayling, Ronald (2003)*, իսկ մեծամասնության մեջ տարբերվեր նշված են վերջում:

Ինչո՞ւ են տարբերվում № 44 և № 45-ը, № 27 և 131 էջում նշված № 2, դրան հաջորդող № 4-ը և 5-ը: Մի թե № 25 և № 26-ը նույն աղբյուրները չեն:

Ինչո՞ւ է 319 էջանոց *Wex, Michael. Born to Kvetch: Yiddish language and culture in all its moods. (New York: St. Martin's Press, 2005* գիրքը նշված Ամսագրեր և թերթեր բաժնում /ի դեպ, անբացատրելի փակագծով/: Այստեղ են նաև հայտնվել անհասկանալի № 7-ը կամ № 8-ը և այլն: Հավելենք, որ ատենախոսը սեղմագրում պնդում է, որ Ներածության մեջ նշված է նաև ծավալը (սեղմ., էջ 6), բայց դա այդպես չէ՝ ոչ մի լեզվով ներկայացված չէ (սեղմ, էջ 6, 19, 21):

Ա. Սողոյանը նկատեց. «Որպես աշխատանքի հիմնական նպատակ՝ շեշտադրվում է կատակերգուի ստեղծագործությունների դիտարկումը հրեա-ամերիկյան գրականության համատեքստում և ազգային ընդհանուր (լայն ընդգրկում), ինքնության անհատական (նեղ ընդգրկում) ու լեզվական առանձնահատկությունների հարցերի բարձրացումը: Այդ տրամաբանությամբ հեղինակը բավականին հիմնավոր անդրադառնում է իդիշով և եբրայերենով ստեղծված գրականության գեղարվեստական, գաղափարական, ազգային ու լեզվական կողմերին:

Ատենախոսությունն ընդհանուր առմամբ հետաքրքիր է, այն բազմակողմանիորեն քննում է Նիլ Սայմոնի ստեղծագործությունը, հեղինակն ուսումնասիրել է նյութի մասին եղած գիտական գրականությունը, ծանոթ է խնդրի պատմությանը, տեսակետներին և կարողանում է դրանց համադրության և ինքնուրույն վերլուծությունների արդյունքում հանգել համոզիչ ու տրամաբանական եզրակացությունների»: Շարունակելով՝ Սողոյանը նշեց. «Ուսումնասիրության մեջ որոշ հատվածներ կապված չեն պատճառահետևանքային կապով, տեղ-տեղ ընդհատված է մտքի ընդհանուր շղթան: Առաջին գլխում, օրինակ, երկար խոսվում է էբզիստենցիալիզմի հարցադրումների և տեսության մասին (էջ 22-26), ապա անցում է կատարվում հրեա-ամերիկյան գրականության պատմությանն ու հարցադրումներին (էջ 26-37), ինչից հետո ներկայացվում է Նիլ Սայմոնի ստեղծագործությունը: Այդ ծավալուն հատվածները թերևս կարևոր են աշխատանքի համար, բայց ներհյուսված չեն ընդհանուր պատումին, չկա տրամաբանված կապ:

Աշխատանքում կան նաև քերականական ու տպագրական վրիպակներ, բովանդակության մեջ նշված էջերը չեն համընկնում բուն աշխատանքի էջերին, հաճախակի կիրառվում են ոչ հայերեն չափերտներ և այլն»: Ինչին Վ. Նավասարդյանը ավելացրեց, որ աշխատանքի «լեզուն տեղ-տեղ կաշկանդված է, առկա են նաև տառասխալներ», ինչն անթույլատրելի է գիտական ուսումնասիրությունում:

Առաջին՝ «Նիլ Սայմոնի դրամատուրգիայի կայացումը հրեա-ամերիկյան գրականության համատեքստում» գլխում անդրադարձ է կատարվել «ինքնության ճանաչումից և ազգային դրսևորումից բխող էքզիստենցիալ մի շարք հարցադրումների: Ըստ այդմ էլ՝ կատարվել են ուսումնասիրություններ՝ կապված էքզիստենցիալիզմի (գոյապաշտության) փիլիսոփայության հետ, որն իր անմիջական ազդեցությունն է ունեցել այդ ժամանակաշրջանի ամերիկյան գրականության վրա» (ատեն., էջ 8 և սեղմ., էջ 7): Ինչպես նշել էր Վ. Արսենյանը, «Առաջին գլուխն ամբողջությամբ տեսական է: Առկա են լեզվական խճողումներ, վիճելի և սիրողական մտքեր. գլխի 1-ին պարբերություն, էջ 15 – 2-րդ պարբերություն, էջ 17 – 1-ին պարբերություն»: Կարող ենք ավելացնել նաև էջ 36-ից «Ինչպես գիտենք, Փրբլ Հարբրրի վրա հարձակումից հետո ԱՄՆ-ն ներքաշվեց պատերազմի մեջ, և սկսվեց Երկրորդ աշխարհամարտը»¹: Ստորև՝ «Ամերիկյան կյանքն այլևս սպառել էր իրեն, և դարձել հիմար, ոչ սիրառատ և տաղտկալի մի վայր, որտեղ վճռականությունն ու խելքը պայքարում էին հիմարության և խենթության դեմ: Կարող ենք փաստել, որ կիսագրագիտությունը դարձել էր նոր Ամերիկայի կարևոր բաղադրիչը, ինչն ապահովում էր անտարբերություն, անհոգություն և հեշտ ապրելակերպ» (էջ 36-37):

Ստիպված ենք նշել, որ անհրաժեշտ է բնագիրը հղել տողատակում, այլապես անհասկանալի է, թե նկատված վրիպումը ատենախոսի թարգմանության սխալն է, թե հեղինակն է այդպես արտահայտվել. «Նիլ Սայմոնն ահա ինչ է պատմել. «Մինչ օրս ես երբեք իրականում չգիտեի, թե որն էր ընտանեկան բոլոր կոիվների և կոիվների պատճառը նրանց երկուսի միջև... Մայրս ասում էր նրան և շատ զայրանում էր, հետո կրկին կվերադառնար, և նրանք կրկին միասին էին: Նրանք իսկապես սիրում էին իրար»: Սայմոնը նշել է, որ իր գրող դառնալու պատճառներից մեկն այն էր, որ բավարարի նման զգացմունքային ընտանեկան խնդիրներից անկախ լինելու կարիքը, որը նրան խիստ անհրաժեշտ էր: Օրերից մի օր նա այսպես է մտածել. «Ավելի լավ է՝ սկսեմ ինչ-որ կերպ հոգ տանել իմ մասին... Դա ինձ ուժեղ կդարձրնի որպես անկախ մարդ: Կարծում եմ՝ ինձ կատակերգության գրող դարձրեց այն, ինչն իմ մանկության իսկապես տգեղ, ցավոտ բաների արգելափակումն էր, և դրանք հումորային կեցվածքով ծածկելը... Ծիծաղելու համար մի բան էր անհրաժեշտ անել, մինչև որ ես կարողանայի մոռանալ, թե ինչ էր ինձ ցավեցնում» (էջ 37-38): Անհասկանալի է, թե ի՞նչ ի նկատի ունի ատենախոսը, գրելով. «Սայմոնը կրողն է Համաշխարհային երկու պատերազմների, որոնք, անշուշտ, իրենց հետևանքներն են ունեցել գրողի բարոյահոգեբանական արժեհամակարգի վրա: Այդ պատերազմները նրան կարողացել են կոտրել հոգեպես, սակայն նրա զրկածքներում հանդիպում ենք սև, բայց թեթև հումորի, ծիծաղաշարժ պատմությունների, որոնք ընթերցողին կտրում են մի պահ այդ արհավիրքի ճիրաններից: Եվ այդ ծիծաղաշարժ պատմությունները կերտելիս գրողը հաճախ օգտվում է չափազանցություններից, որոնք ավելի են հետաքրքրացնում գաղափարն ու այուժեն» (էջ 38): Բայց ոչ մի օրինակ չկա: Ինչպե՞ս կարող էր 1929-ի Մեծ ճգնաժամը Նիլ Սայմոնին կտրել «սեփական երազանքի ճանապարհից» և խաթարել «նրա հետագա ծրագրերը» (էջ 39), եթե հեղինակը այդ տարի է ծնվել: Եվ ի՞նչ ի

¹ Բայց հայտնի է, որ դա այդպես չէ: 1941թ. դեկտեմբերի 7-ի առավոտյան տեղի ունեցած հարձակումը առիթ հանդիսացավ, որպեսզի ԱՄՆ-ը՝ մինչ դա չեզոք երկիր լինելով, հենց հաջորդ օրը պաշտոնապես մուտք գործի արդեն սկսված 1939-ին Երկրորդ համաշխարհային պատերազմ:

նկատի ունի ատենախոսը, գրելով՝ «Ցավոք, դարաշրջանի տվյալ ժամանակահատվածն աննպաստ հետք և ազդեցություն է թողել գրողի ամբողջ ստեղծագործական ընթացքի վրա» (էջ 39):

«Երգիծանքի կոնցեպտուալ և ժանրային դրսևորումները Նիլ Սայմոնի պիեսներում» վերնագրով երկրորդ զուխը հիմնականում նվիրված է հեղինակի պիեսներում արտահայտված երգիծանքի հայեցակարգային և ժանրային առանձնահատկություններին: «Այստեղ անդրադարձ է կատարվել մի շարք պիեսներում ոչ միայն երգիծանքի կիրառման և դրսևորման ձևերին, կոնցեպտուալ կառույցին, այլև որոշ գրաքննադատների աշխատանքներին, որոնք այս կամ այն կերպ իրենց նպաստն են թողել դրամատուրգի աշխատանքների գրաքննության գործում: <...> Հեղինակն իր կերպարներին օժտում է ամերիկյան բարձր հասարակությանը հատուկ շքեղությամբ, ուղղամտությամբ և հստակ դիրքորոշմամբ, սակայն այդ նույն մշակույթին պատկանող ներկայացուցիչները հայտնվում են չարիքների ճիրաններում և շատ հաճախ մոռանում են իրենց ուղղամտության մասին» (ատեն. էջ 9 և սեղմ. էջ 9):

Երրորդ զուխը վերնագրված է «Հրեա-ամերիկյան գրականության մեջ արծարծվող ինքնության ու փնտրտուքի ազդեցությունը Նիլ Սայմոնի պիեսների կերպարների վրա» և նվիրված է ստեղծագործությունների քննությանը: Այստեղ Ներսեսյան Անին ներկայացնում է, թե ինչպես է քննության առարկա հանդիսացող պիեսների միջոցով «ուսումնասիրել Նիլ Սայմոնի դրամատուրգիայում առաջ քաշած այդ համամարդկային խնդիրը հրեա-ամերիկյան գրականության համատեքստում, ինչպես նաև ընդհանրապես զննել ինքնության փնտրտուքի ու ներքին ազատության խնդիրների արտահայտման միջոցները, որոնք իրենց հերթին բացահայտվել և ներկայացվել են ըստ նշանակության» (ատեն. էջ 7 և սեղմ. էջ 12-13):

Ք. Հովհաննիսյանը ընդգծեց, որ «ատենախոսը տիրապետում է ատենախոսության նյութին՝ Նիլ Սայմոնի ստեղծագործությունների մասին գրականագիտական անդրադարձերին, որոնք պատշաճ ներկայացված են աշխատանքում: Թեև ատենախոսության վերնագիրը ընդգծում է նաև կատակերգությունների ժանրային առանձնահատկությունների խնդիրը, պետք է նկատել, որ աշխատանքը բացառապես բովանդակային, թեմատիկ վերլուծություն է: Ատենախոսին չի հաջողվել ներկայացնել Նիլ Սայմոնի կատակերգությունների ժանրային բնորոշիչ հատկանիշները կամ երգիծանքի տեսական հարցադրումների շրջանակում վերլուծություն: Պատահական չէ, որ ատենախոսության գրականության ցանկում մեկ-երկու տեսական աշխատանք է նշված, այն էլ տասնամյակներ առաջ տպագրված: Ատենախոսության զուխները ևս բաժանված են զուտ թեմատիկ-բովանդակային վերլուծական դիտանկյուններով: Նիլ Սայմոնի կատակերգությունները չեն վերլուծվում ամերիկյան դրամատուրգիայի ընդհանուր օրինաչափությունների կամ առանձնահատկությունների համատեքստում, ատենախոսությունը տվյալ գրողի գործերի մեկուսացված անդրադարձ է»:

Հ. Մուսայելյանը նկատեց. «Թեման ինքնին ուշագրավ է ու արդիական, ինչի առումով առկա են բավարար հիմնավորումներ ատենախոսության համապատասխան հատվածներում: Ուսումնասիրության մեջ հնարավորինս ընդգրկված է Սայմոնի գրական ժառանգությունը, ամերիկյան՝ անցյալ դարի դրամատուրգիայի ընդհանուր համապատկերի վրա՝ ընդգծված նրա դերն ու նշանակությունը: Առանձին ստեղծագործությունների, ինչպես նաև կերպարների պատշաճ վերլուծությունների միջոցով ատենախոսության հեղինակը կարողացել է պատկերացում տալ խնդրո առարկա երևույթների ու դրանց տիպաբանական խնդիրների ու առանձնահատկությունների վերաբերյալ: Ատենախոսությունը գերծ չէ նաև թերություններից, որոնց մեջ առավել ակնհայտ են հեղինակի՝ գիտական ձևակերպումների ոչ միշտ բավարար մակարդակը, ինչը նախ և առաջ տեսանելի է աշխատանքի բոլոր երեք զուխների վերնագրերի պարագայում: Նկատված երևույթը կարելի է տեսնել աշխատանքի բազմաթիվ հատվածներում,

որոնցում առանձին բառակապակցություններ և նույնիսկ ամբողջական նախադասություններ ճշգրտված չեն գիտականորեն, նկատելիորեն պրիմիտիվ են: Ներսեսյանն ակնհայտ խնդիրներ ունի նաև քերականության, մանավանդ կետադրության հետ, որոնք ատենախոսության տարբեր մասերում կոպտորեն խախտված են»:

Լ. Գասպարյանը իր հերթին առանձնացրեց, որ «ատենախոսության հիմքում երգիծանքի և հումորի առանձնահատկությունների վերհանումն է (ատենախոսը ընդգծում է այս հանգամանքը արդիականության և նորույթի մեջ), ազգային և համամարդկային համադրումը (էջ 6), սակայն աշխատանքի առանցքային երկրորդ գլխում արտացոլված օրինակները առավել համամարդկային են. սոցիալ-հոգեբանական, կենցաղային և այլն: Ազգային երանգավորմամբ դիպուկ հատվածների վերլուծությունը, այն էլ երգիծանքի և հումորի լույսի ներքո, խիստ սահմանափակ է: Ավելին, եզրակացության մեջ (կետ 5) ատենախոսը ընդգծում է, որ Նիլ Սայմոնը «գեղեցկացնում ու զարդարում է իր խոսքը հրեական միստիցիզմով և դեմոնոլոգիայով, կիրառում ասույթներ ու խոսույթներ», սակայն գործնականում դրանք գրեթե չեն արծարծվում:

Կապը ատենախոսության վերնագրի և եզրակացության միջև զգալի խզված է. ատենախոսը մեծապես շեշտադրում է ներգաղթյալի դրաման Նիլ Սայմոնի աշխատություններում, իսկ երգիծանքի և հումորի թեմատիկայի առանցքային լինելը սույն պարադիգմայում մոլվում է հետին պլան»:

Ատենախոսությունը վերջանում է ծավալուն եզրակացություններով, որտեղ Անի Ներսեսյանը ներկայացնում է գլխավոր եզրահանգումները, թեպետ երբեմն տեքստի որոշ դրույթներ բառացիորեն կրկնվում են, ինչը խրախուսելի չէ գիտական աշխատություններում: Օրինակ՝

Պիեսներում պատկերված ժամանակակից ամերիկյան "հեշտ ու թեթև կյանքի" էտևում թաքնված է այդ հոգեգուրկ հասարակության պրագմատիկ, նյութապաշտ էությունը (էջ 10 և 125),

Մեր քննության առարկա հանդիսացող պիեսների միջոցով ջանացել ենք ըստ էության ուսումնասիրել Նիլ Սայմոնի դրամատուրգիայում առաջ քաշած (էջ 12 և 127),

Նիլ Սայմոնի դրամաներում կարևորագույն տեղ է հատկացվում երկրնտրանքին <...> հայեցակարգեր և նոր մոտեցումներ է առաջ քաշում (էջ 5, 63 և 127),

արտահայտում է եղբայրագգացության ու կարեկցության, սիրո և մխիթարանքի ծավալը (էջ 11 և 49),

Ամերիկյան կյանքն այլևս սպառել էր իրեն, և դարձել հիմար, ոչ սիրառատ և տաղտկալի մի վայր, որտեղ վճռականությունն ու խելքը պայքարում էին հիմարության և խենթության դեմ (36 և 67),

Նիլ Սայմոնի և իր ժամանակակիցների երգիծական գրականությունը ըմբռնելու համար նախ անհրաժեշտ է հասկանալ, թե ինչ պատմական ժամանակաշրջանում են նրանք ապրել: Հեղինակը կրողն է երկու Աշխարհամարտերի, որոնք, անշուշտ, իրենց հետևանքներն են ունեցել գրողի բարոյահոգեբանական արժեհամակարգի վրա: Այդ պատերազմները նրան կարողացել են կոտրել հոգեպես, սակայն նրա գրվածքներում հանդիպում ենք սև, բայց թեթև հումորի, ծիծաղաշարժ պատմությունների, որոնք ընթերցողին կտրում են այդ արհավիրքի ճիրաններից: Եվ այդ ծիծաղաշարժ պատմությունները կերտելիս գրողը հաճախ օգտվում է չափազանցություններից, որոնք էլ ավելի են հետաքրքրացնում զաղափարն ու սյուժեն (էջ 38 և 66-67):

Ատենախոսը ոչ միշտ է ճշգրտված տվյալներ ներկայացնում, օրինակ՝ հանրաճանաչ ավստրիացի գրող Ֆրանց Կերֆելին (էջ 35) անվանելով ամերիկացի (նա ԱՄՆ տեղափոխվել

էր 1940-ին, քաղաքացիություն ստացել 1941-ին, իսկ 1945-ին՝ մահացել, չգրելով անգլերեն լեզվով ոչ մի տող):

Ամերիկյան գրականության մեկ այլ ներկայացուցչի՝ Զինգերի անունը սխալ է տրված՝ աշխատանքի տարբեր հատվածներում (էջ 9, 28 և 35): Ոչ թե Բաշնի, այլ Բաշնիս, այսինքն՝ Բաշնիի որդին՝ թարգմանաբար անգլերենից՝ այս մայրական անունը հեղինակը օգտագործում էր որպես կեղծանուն:

Ատենախոսը մեկ նշում է երկու տասնյակ պիես (էջ 49), մեկ՝ ավելի քան 30 պիես և գրեթե նույնքան կինոսցենարներ (էջ 37):

Սեղմագրի բովանդակությունը ընդհանուր առմամբ համապատասխանում է ատենախոսության հիմնական դրույթներին և ԲԿԳԿ-ի պահանջներին: Նկատենք սակայն, որ հայերեն, ռուսերեն և անգլերեն հատվածները ոչ միշտ են համապատասխանում միմյանց: Իսկ ամենակարևորը՝ տպագրված աշխատանքների ցանկը՝ առանց էջերի, վայրի և մնացած պահանջվող տվյալների, փոքրատառ գրված անուններով, թույլ չի տալիս դրական կարծիք ձևավորել:

Նշված դիտողությունները նվազեցնում են ատենախոսության արժանիքներն ու ստացված արդյունքները: Վերոնշյալ նկատառումները արժեզրկում են աշխատանքը, որն այնուամենայնիվ իր ընդհանրության մեջ հստակ պատկերացում է տալիս Սայմոնի ստեղծագործության ժանրային և թեմատիկ առանձնահատկությունների մասին՝ ընդգծելով նրա տեղն ու դերը ամերիկյան դրամատուրգիայում: Այդ իսկ պատճառով առաջարկում ենք սրբագրել և խմբագրել Անի Գարեգինի Ներսեսյանի «Նիլ Սայմոնի կատակերգությունների ժանրային և թեմատիկ առանձնահատկությունները» թեկնածուական աշխատանքը, եթե այն պետք է հրատարակվի, և միայն այդ պարագայում ատենախոսությունը հանձնել տպագրության:

Այսպիսով, ամփոփելով տվյալ աշխատության մեր գնահատականը, կարծում ենք, որ կատարվել է ծավալուն աշխատանք, որը, ունենալով գիտական պատշաճ մակարդակ և հայեցակարգային հիմնավորված ապարատ, կարող էր լինել անթերի: Թե ինչպիսի մեկնաբանություն կտա Անի Ներսեսյանը մեր հարցադրումներին, ցույց կտա պաշտպանության ընթացքը: Ըստ այդմ, եզրակացությունը թողնում ենք մասնագիտական խորհրդին:

Կարծիքը ձևակերպված և հաստատված է ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի արտասահմանյան գրականության, գրական կապերի և գրականության տեսության բաժնի նիստում:

Արտասահմանյան գրականության, գրական կապերի և
գրականության տեսության բաժնի վարիչ՝
Բ.Գ.Թ., դոցենտ Բ. Բեջանյան

Հաստատում եմ Բ.Գ.Թ., դոցենտ Բ. Բեջանյանի ստորագրությունը՝
Գրականության ինստիտուտի գիտքարտուղար՝ Բ.Գ.Թ. Մ. Սարգսյան

23. 06. 2025

